ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 79-Ա

« 19 » սեպտեմբերի 2024 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի ԹԻՎ 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 42-րդ կետերի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 18-րդ կետերի և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Ամասիա համայնքին պատկանող գույքը՝ ՄՏ3-82.1 անիվավոր տրակտորը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բանդիվան բնակավայրի բնակիչ՝ Հովիկ Մկրտչի Սուքիասյանի հորը՝ Մկրտիչ Հովհաննեսի Սուքիասյանին նվիրատվության իրավունքով օտարելու մասին» թիվ 37-Ա որոշման բովանդակությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքին պատկանող գույքը՝ Բելառուս ՄՏ3-82.1 անիվավոր տրակտորը/ պետհամարանիշ 7718LS/ նվիրատվության իրավունքով օտարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բանդիվան բնակավայրի բնակիչ՝ Հովիկ Մկրտչի Սուքիասյանի (2011 թվականի հունվարի 20-ին մարտական հերթապահության ժամանակ զոհված) հորը՝ Մկրտիչ Հովհաննեսի Սուքիասյանին:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 9 *Դեմ՝ 0* *Ձեռնպահ՝ 0*

Հարությունյան Ջ.
Ղուկասյան Ա.
Ախցխեցյան Է.
Աբրահամյան Ն.
Մարդոյան Գ.
Զաքարյան Հ.
Արսենյան Ջ.
Գևորգյան Հ.
Մարտիրոսյան Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

« 19 » սեպտեմբերի 2024 թվական
գյուղ Ամասիա